23. ԽՈԽԻ

Կէղնի, չէղնի մարդ մը։

Էդ մարդուն կեր կնիկըմ ու տղե մը։ Մարդն է, կընկնի մեռնի։ Կմնան մամն ու ուր տղեն։ Տղեն պզտիկ էր։

Էդ տղեն է, օր կշոշնա, կէղնի տըսնուհինդ տարեկան տղե մը, ուրանք շատ խեղճութենի մեջ կէղնին։

Տղեն աչք օր կրանա, կէղնի դադկ ու դադումի, մամուն կասե.—Մամո, իմ պապ ինչ գործ օր էրեր է, զիս գիր վըր էն գործուն։

Մամն կասե.— Լաո, քու պապ ֆըրընճութենն կէներ։

Կէրթա տղեն ֆըրընճու մոտ աշկերտութենն կէնե։ Քանի մ՝ օր կմնա, կիգա։

Կասե մամուն.— Մամո, իմ պապ ֆըրընճութենն չէրեր է, զօզորդն ասե՝ իմ պապ ի՞նչ կէներ։

Մամն ըստհազ կվերցու կասե.— Լաո, քու պապ ջազցպնութենն կէներ, կապրենք։

Տղեն կէրթա ջաբաթ մ՝լե ջազցպնութենն կէնե, կթորկե կիգա։

Կասե.— Մամո, էդ լե իմ պապու գործ չէ, զիմ պապու սանյաթն ասե դրուստ, էրթամ զիմ պապու սանյաթն էնիմ։

Մամն ջանդարդի կէղնի, կասե.— Լաո, քու պապու սանյաթն օր կա՝ թոռչութենն էր։ Կէրթեր, լուսմըթենն լուսմութ թոռ կթալեր, կբերեր ձուկ ֆախեր, կապրենք։

Տղեն կէլնի, պատդլխեն կիջու զպապու թոռն ու կվերու, կէրթա ծովու պռուկ։

Կէրթա զթոռ կթալէ, կբռնէ էրկու ձուկ, կառնէ կիգա տուն։

Էդ օր էրկու ձկով կրնցուն։

Լուսմութ օր կէղնի, մեկ լէ կէլնի կառնէ զուր թոռ, կէրթա, կթալէ հընչի հ'իրկուն բան չէլնի։ Մեկ լէ կթալէ, կասէ՝ ախբր էրթալու եմ, կանի մեկ լէ թալեմ, տեսնամ՝ ինչ կէլնի։ Կթալէ, կէլնի մեկ ձուկըմ ու խոխըմ։ Կառնէ ու կիգա տուն։ Կիգա ճամբու կէս, ինքն ուրեն դուշունմիշ կէղնի, կասէ. «Ջանըմ, ես զէդա խոխ հ'որի՞ տանեմ, հոկուց ի՞նչ խեր կիդա»։ Կվերցու թալէ։

Քիչըմ տեխ կէրթա, կդառնա վերու, կասէ. «Ախբր իմ խըսմաթ ս.ստված զէդ է տվի»։

Կառնէ կիգա տուն։ Զէդ խոխ կդնէ փանջարեն ու կթողէ կէլնի դուրս։ Մամ լէ դուրս կէղնի։

Էդոնք օր դուրս կէղնին, էդ խոխի մեջեն կէլնի հուրնեկ-հրեղեն ախչիկըմ, կավլէ-կհ'իստկէ զտախտ, ժեխ կթափէ, կըլնա ուրեն հաց ուտե, զամներ թամիզըմ կլվա, դնէ ուր տեխ ու կդառնա, կմտնի ուր խոխի մեջ։

Տղի մամն է, կդառնա կիգա տուն։ Կտեսնա օր, տախտ ավլած են, ժեխ թափած են ու աման-չաման լվացեր են, դրի ուր տեխ։ Կզարմնա մնա, «Ջանըմ,— կասէ.—զէդի ո՞րն է էրի»։

Տղեն կդառնա կիգա տուն։

Մամ կհարցու տղից։

Տղեն կասէ.— Ես խաբար չունիմ, ես լէ քենէ պիտի հարցուցենք, զէդա իմ զատ լէ լցեր ին, կերի, աճայիպ էդի ո՞ր պիտի էղնի։

Մամ կասէ.— Հաո, ես ասի զայիր իմ տղեն է լցի, կերի ու ավլի հ'իստկի, թոզեր է հ'ելի դուրս։

Տղեն շըկի կէրթա։ Կասէ.— Մամո, կէղնի ու չէղնի մեր տուն գող կա։ Օր հըմալ է, բի զիս պըլուլէ մըջ խըսլին, կանկըցու դռան ետև ու զնա դուրս։

Մամ կբերե զտղեն պլուլէ խըսլի մեջ, կկանկըցու դռան ետև ու կթողէ կէլնի դուրս։

Մամն է, օր կթողէ, կէլնի դուրս, տղեն կիշքեր օր, էդ խոխ բաց-վավ ու հուրնեկ-հրեղեն ախչիկըմ դուրս էլավ, ավլեց զտախտ, ժողվեց զժեխ, բերեց քոմեց զռան ետև ու էրեց օր դառներ, տղեն թալեց զձեռք, բռնեց։

Օր բռնեց, ախչիկն ասեց.— Տղա՛, թող զիս, ես քու ձեռքեն էլ հ'ու՞ր պիտի փախնեմ, դու ընծիկ, ես քղիկ։

Առան զիրար ու էղան էրիկ ու կնիկ։

Ընցավ ժում ու ժամանակըմ։ Դրկիցներ հասկըցան օր, էդ տղեն խորոտիկ ախչիկ մ'է բերի ուրեն, կպահե։ Գացին դրին թագավորի ան-

կաճ, թե՝ չասիս, ֆըլան աղեն կնիկ մ'է բերի ուրին, հուրի մալակ կմանի, արևու պես շող կիտա մըշ տան։

Թագավորն է, զէդ օր լսեց, միտկ էրեց զէդ տղի գլուխն ուտե, ղախչիկն առնե։

Կկանչե զտղեն, տանե ուր դիվան։

Օր կկանչե տանե, լալին կասե.— Գնա, էդ տղեն ասա՝ զիս ու զիմ ասքյար օրըմ տավաթ թըղ էնե, օր չէնե՝ զուր գլուխ կզարկիմ։

Լալեն կիգա տղին կասե։

Տղեն կասե.— Թըղ էղնի, իսկի թագավորի խոսք գետին կընկնի՞։ Քառսուն օր մովլաթ թըղ իտա, տավսաթ իմ վրեն։

Լալեն կասե.— Հայդե, գնա։ Ես տվի քզի քառսուն օր մոֆուլ։

Տղեն էլավ էդ տեխեն, էրեց զուր նըյաթ, ասեց.— Հեյ վախ, օղորդ օր կասեն խորոտիկ կնիկ բալա է մարդու գլխուն։

Թողեց էկավ ուր տուն։

Կնիկն տեսավ, օր տղեն զուր մադեն կախեր էր։

Հարցուց, ասեց.— Մա՛րդ, դու զքու նըյաթ հ'որի՞ն ես էրի հ'էսօր։

Տղեն վերուց ասեց.— Ես զիմ նըյաթ չէնիմ, ըպա ո՞ր էնե։ Թագավոր հ'էսօր կանչեր է տարի, ասեր է, թե օր զիս ու զիմ ասքյար օրըմ տավաթ չէնիս, զքու գլուխ կղարկիմ։

Կնիկն ասեց.— Էդո՞ր հ'ապով իս մադեդ էրի։

Տղեն ասեց.— Հա։

— Տնաշեն, ասի ի՞նչ ծանդր բան է։ Զէդի հեչ, հոգ մ'էնի։ Հ'ելի գնա, ֆըլան ծովու խեչ հ'ազբուրըմ կա։ Գնա էնտեխ, շուր խմե, ասե՝ օխե՞շ։ Հանդե էնի կասե՝ փեսա, էկո ներս, լողմե մը հաց կի, ըռհաթի, սորա էլի գնա։ Դու ասե՝ շնորհակալ իմ, չըմ ուտի։ Օխեշ կասե քզի՝ ի՞նչ կուզիս։ Դու ասե՝ քու ախչիկն է ճամբի զիս, էն էրկու կլոր քար օր փաթըթուկ է կեմ, դրուկ է պատի գլուխ, տուր առնեմ, էրթամ։

Տղեն, ախչկա ասածի պես, կէլնի կիգա վըր էդ հ'ազբրին, կխմե շուր, կասե՝ օխե՞շ։

Օխեշ օր կասե, մեկ մ' լե կտեսնա օր ձենըմ ներսեն էկավ. «Փեսա, էկո ներս, քիչըմ ըռհաթի, լողմե մը հաց կի, սորա էլի գնա»։

Տղեն կասե.— Շնորհակալ իմ, ես կուշտ իմ։

Զեն կասե.— Փեսա շան, հ'որի՞ն ես էկի։

Տղեն կասե.— Էկեր իմ էն էրկու կլոր քար հ'ապով, օր պըլուլուկ է կեմեր, դրուկ է պատի գլուխ. քու ախչիկ կուղե, տուր՝ առնեմ էրթամ։

Օխեշ կբերե զչուխտ քար, հըմալ պըլուլուկ կիտա տղեն, կառնե կիգա։ Շատ կիգա, քիչ կիգա, աստված գինա, կիգա սարու մը կմոտենա։ Շատ կանոթնա, ինքն ուրեն կասե. «Ջանըմ, էդա քարերու մեջ ինչ կա, օր էդի հ'ուզեր է ու ես էրեր իմ բեռ, կառնեմ կէրթամ»։

Կվերու զմեկ քարն թալե ու կէրթա։ Քիչըմ տեխ կէրթա. «Ջանըմ,— կասե,— ես հ՝որի՞ զէդ քար թալեցի, հալբաթ էդոր մեջ բանըմ կա, օր իմ կնիկ հ՝ուզեր է»։

Կդառնա օր վերու, կտեսնա օր սինու մը ինչ թուռլու եմակ ասիս՝ հանդե դրուկ էդ քարու կուշտ ու քար լե մեկդին նստուկ։ Կնստի, աղեկըմ զուր փոր կբդե, կվերցու զքարն ու կիգա։

Կիգա, ճամբու հետ մարդու մը հ՝ըռաստ կիգա, օր թուրըմ կա կապուկ վրեն։

Էդ ճամբորդ կասե տղին.— Ախպերս, ճամբուց գիկամ, խոնախ հեռուն է, անոթցեր եմ, բրդուճըմ հաց չկա՞ քու մոտ՝ իտաս ուտեմ։

Տղեն կասե.— Հրամե, թե հաց կա, թե զատ, կի քզի կուշտ ու էլի գնա։

Կբերե զէդ քար, կզարկե գետին, սուֆրեն կբացվի։ Կհանե քասե մը զատ ու հաց, կիտա մարդուն, կուտե։

Մարդն օր կուտե, կշտանա, կդառնա տղին կասե.— Տղա, զէդ քար չըս իտա՞ ընծի, զիմ թուր իտամ քզիկ։

Տղեն կասե.— Քու թրի հունարն ի՞նչ է, օր կասիս։

Ճամբորդն կասե.— Իմ թրի հունարքն էն է, օր ասես ուրեն՝ թուր գնա զֆըլան մարդու գլուխն կտրե ու արի, կէրթա կտրե ու կիգա։

Օր քիչըմ տեխ էդ ճամբորդն է կիգա, կհեռանա, տղեն կփոշիմնի։

Կասե.—Զիմ քար տուր. յան կիտաս, յամ կասեմ թրին՝ զքու վիզ կտրե։

Ճամբորդն է, զարուր մնալով, կհանե զտղի քար կիտա, փոր-փոշման կդնե զձեռք ուր ծոց ու կիտա զուր ճամբեն առեջ։ Տղեն կառնե զուր էրկու քարն, զթուրն ու կընկնի ճամբախ, կիգա։ Շատ կիգա, քիչ կիգա, հ՝ըռաստ կիգա իրիցու մը։

Էրեց կասե.— Տղա, քու մոտ լողմե մը հաց չկա՞, իտաս ուտիմ, անոթցեր իմ։

Տղեն կասե.— Հ՝որի՞ չկա, դու նստի հ՝ոդա, հըմկա կբերեմ։

Կգլորցու զքար գետին, մեկ լե սուֆրեն կրացվի։ Օր կբացվի, կվերցու սըհանըմ զատ ու հացըմ, կբերե, կիտա իրիցուն, կասե.—Դը քզիկ կի։

Էրեցն հաց կուտե, կխըլըսի, ուր ուշք ու միտկ վըր քարուն է։ Էրեց խըսմին անկշտում է։

Կասե.— Տղա, տղա, զէդ քար չը՞ս իտա ընծի։ Տուր քար ընծի, ես լե զիմ գավազան կիտամ քզի։

Տղեն կասե.— Դու զիմ քարու հունարք տեսար, քու գավազանի հունարքն ի՞նչ է, ասե, օր խելքս կտրեց՝ կիտամ։

Էրեցն կասե.— Իմ գավազանի հունարքն էն է, օր էրթաս քառասուն տարվան մեռելի վրեն կանիս, խրտիս հ'ինք, ասես՝ մեռել, հ'ելի կանի, կելնի կանի։

Տղեն կասե.— Կիտամ։

Կհանե քարրմ կիտա, զտերտրու գավազան կառնե։

Էրեց լե կառնե զքարն ու կէրթա։

Էրեց օր քիշրմ կհեռանա, տղեն կփոշեմնի։ Կդառնա ետևանց, կիգա կհասնի իրիցուն, կասե.— Յան զիմ քար կիտաս, յամ զքու գլուխ կզարկիմ։

Կհանե զթուրն, կառնե ձեռք։

Ինչ շարա կէնե, էրեց զքար չիտա։ Էրեց էլ խոլայի հալով քար կիտա՞, ջանդարդի կէղնի, կասե.— Թուր, զքզիկ տեսնամ, հրմալ կտրես զիրիցու գլուխ, օր յոթ գազ ջանդկից հեռուն հ'ընկնի։

Հրտ ասելու պես, իրիցու գլուխ կէրթա։ Տղեն կառնե զջուխտակ քարն, զթուրն ու զէրեցու գավազան կիգա։

Քիշմը տեխ կիգա, մեկ լե կփոշեմնի, ինքն ուրեն կասե.—Էդ էրեց խեղճ է, հրմլա կտրի զգլուխ, թալի արևու դեմ, աղեկ չէրի. դառնամ վերցում, յամ սաղցում, նոր հ'իգամ էրթամ։

Կդառնա կիգա, զգավազան կխրտե իրիցու ջանդակ, կասե՝ «Դը հ'ելի, հերկ է մուրուքդ ցցիս, պառկիս քնիս արևու դեմ»։

Էրեցն կէլնի նստի, քիշրմ կֆքրի, սորա ճար կկտրի, կէլնի կթողե կէրթա։

Տղեն առավ զուր մանդր-մունդր, էկավ ուր տուն։ Բերեց զէրկու քար տվեց կնիկ, զթուրն ու գավազանն ալ մնաց ուր մոտ։

Օր բերեց զէդ քարեր տվեց կնիկ, կնիկն ասեց.— Դը գնա թագավորին ասե՝ ինչ խրդար գդալ վերցնող կա ուր քաղքի մեջ, թրդ առնե, իգա իմ տուն տավաթ։

Տղեն էլավ էկավ լալի մոտ։

Լալեն տեսավ զտղեն, ասեց.— Տղա, էկա՞ր։

Տղեն ասեց.— Հա, էլի գնա, ասե թագավորին՝ ուր քաղքի մեջ ինչ խրդար գդալ վերցնող կա, թրդ հ'ըմեն ժողվե ու իգա իմ տուն տավաթ։

Թագավորն է, էլավ, ինչ խրդար գդալ վերցնող կեր ուր քաղքի մեջ, քոմեց ուր հետ, առավ էկավ տղի տուն։ Հրմալ լրցվան դուրս ու ներս, օր ասեղ թալելու տեխ չմնաց։

Ախչիկն է, քարերուն հրաման էրեց՝ սուֆրե մը բացեց, օր արարած աշխարկի մեջ իսկի չըր էղի, ամեկու առջև մեկ մեկ արծրթե գդալ, օսկե չանաղրմ դրեց ու հրաման էրեց՝ կերակուր էկավ։ Երբ կերան խրլրսան, ախչիկն վերուց ասեց.— Ես կխնդրեմ, օր ամեկ մարդ զուր չանաղն ու դրգալն առնի ուր հետ, էրթա, իմ բաշխիշ լե թրդ էդ էղնի։

Ամեկ մարդ լվաց ուր դդալն ու աման, դրեց ուր ծոցկ, էլավ գնաց։

Օր էլան գացին, թագավոր կանչեց զլալեն, ասեց.— Լալա՜, ես էդ ախչկա սիրուն վառա ու էրեցա, աշխըրքի մեջ հըմլա խորոտիկ բա՞ն լե կէզներ։ Աստծու սիրուն, չարե մ՝ էրե ընծիկ, թը չէ՝ կմեռնեմ։

Լալեն կանչեց զէդ տղեն, առավ էկավ, օր թագավոր հըմալ ասեց։

Օր կանչեց զտղեն բերեց, ասեց.— Կէրթաս ֆըլան ծովու մեջ ձիու քուռակըմ կա, կառնես կիգաս թագավորին. օր չէրթաս առնես հ՝իգաս, զքու գլուխ կզարկեմ։

Տղեն մադեն կախեց, դառցավ էկավ տուն։

Կնիկն օր տեսավ իրիկ զմադեն կախեր է, ասեց.— Քա մարդ, էմլե ի՞նչ է էղի, զքու նըյաթ կախեր իս։

Տղեն ասեց.— Իմա՞լ զիմ մադեն չկախիմ։ Թագավոր դրեր է վըր ընծիկ, թե՝ ֆըլան ծովու մեջ ձիու քուռակըմ կա, կէրթաս, կառնիս կիգաս։

Կնիկն կասե.—Էդո՞ր հ՝ապով զքու մադեն էրեր իս, ըդի՞ է՝ զքու մադեն իսկի մը կախի։ Էլի գնա ծովու մոտ, էն հ՝աղբրի վրեն նստի, ջուր կխմիս, կասես՝ օխե՜շ։ Հանդե իմ պապ կէլնի կիգա։ Օր էլավ էկավ, քզիկ կասե՝ փեսա ջան, քիչըմ էկո մըր տուն նստի, նաֆասըմ առ, սորա էլի գնա։ Դու չէղնի էրթաս, հանդե զքու գլուխ կզարկե։ Օր էլավ դուրս, կասիս՝ քու ախչիկն է ճամբի զիս, զէն էրկու պզտիկ տախտակ կուզե։ Կբերե կիտա քի, առ ու էկո։

Ախչկա ասածի պես, տղեն էլավ հ՝աղբրի վրեն նստավ։ Զբերան տվեց հ՝ազբրի դեմ, խմեց ջուր, օխեշըմ քաշեց։ Օր օխեշըմ քաշեց, Օխեշն էկավ, կանավ հ՝առեջ։

Ասեց.— Փեսա ջան, հրամե ներս։

Տղեն ասեց.—Շնորհակալ եմ, չըմ հ՝իգա, կէրթամ։

Օխեշն կասե.— Հ՝որի՞ն ես էկի։

Տղեն կասե.— Քու ախչիկն է ճամբի, զէն էրկու տախտակ կուզե, էկեր իմ, կտանեմ։

Օխեջ կէրթա, կբերե զէրկու տախտակ, կիտա տղեն։ Տղեն կառնե ու կիգա։

Օր կիգա, կնիկ կասե.— Բերի՞ր։

Տղեն կասե.—Հա։

— Օր հա է, էլիր առ ու զնա ծովու պըռուկ։ Կէրթաս էնտեխ, աղեկըմ զքու տեխ կշինիս ու զտախտըկներ կզարկիս հ՝իբար, կիգաս քու տեխի մեջ կպատըվտիս։ Փշու մը կմնա, հանդե տըսնուհինգ ձի ծովու մեջեն կէլնին, կիգան ծովափ պառկին մեջ ավզին։ Դու աղեկըմ կշաշուշիս, ուրանց մեջ իրեկ տարեկան խորոտիկ քուռակըմ կա։ Կմիամտցուս, զկյամ կզարկիս բերան, կթռնիս կէլնիս վըր պառեկին։ Օր էլար վըր

պառեկին, հանդե էնի կասե. «Տղա՛, հ՚իշի իմ վրավեն, հըմկա զքզի կհանիմ հ՚երկինք՝ արևու հ՚առջև, կէնիմ փոշի, թափիմ ցած»։ Դու ասե. «Ես հանդիմ քու փորու տակ»։ Էնի մեկ լե կասե. «Տղա, հ՚իշի իմ փորու տակեն, զքզիկ կիջում ջանըմու տակ»։ Դու ասե. «Ես հանդիմ վըր քու միջաց»։ Իրեկ հեղ օր ասիր, էնի ըրթե կէղնի քզի, հեծնիս կիգաս։

Ախչկա ասածի պես տղեն կէլնի կառնե ղտախտրկներն ու կիգա ծուլու պռուկ։ Ուրեն աղեկ տեխրմ կփոռե, կմտնի մեջ ու ղտախտրկներ կղարկե հ՚իրար։ Մեկ լե կտեսնա օր տըսնուհինգ ձի էլան ծովու մեջեն, էկան։ էն կասե՝ ես իմ, էն կասե՝ ես իմ։ Տղեն կմիամտցու, հ՚ուշիկըմ հ՚ետևանց զկյամ կղարկա ախչկա ասած քուռկու բերան ու կթռնի վրեն։

Օր կէլնի քուռկու պառեկին, քուռակն կասե.—Տղա, հ՚իշի իմ պառեկի վրավեն, հըմկա զքզիկ կհանեմ արևու հ՚առջև, էնիմ փոշի, թափիմ ցած։

Տղեն կասե.— Հ՚որի՞ն, ես հ՚ու՞ր իմ, հանդիմ քու փորու տակ։

Զինն կասե.— Տղա, հ՚իշի իմ փորու տակեն։

Տղենն կասե.— Ես հանդիմ քու պառեկի վրեն։

Իրեկ հեղ օր կասե, ձին մըթե կէղնի։ Տղեն կելնի, կհեծնի զուր ձին ու կքշե կիգա ուր տուն։

Թագավոր հասկցավ օր տղեն էկեր է։ Կկանչե ղլալեն, կասե.— Լալա, աստծու սիրուն էղնի, մենք ճամբինք զէդ տղեն, օր չիգեր, մեկ լե փրցեր է, էկի։ Աստծու սիրու խաթրի համար էղնի, ես կմեռնեմ էդ ախչըկա դարդեն, չարե մը էրե։

Էլան կանչին զտղեն, տարան։

Լալեն ասեց.— Տղա՛, կէրթաս ֆըլան թագավորի ախչիկ կառնես՝ կիգաս։ Օր չէրթաս բերես, թագավոր միտկ էրեր է, օր զքու գլուխ զարկե։

Տղեն լալին ասեց.— Քառսուն օր մոֆուլ տուր՝ էրթամ բերեմ։

Լալեն ասեց.— Հայդե, քառսուն օր մոֆուլ տվի քզիկ։

Տղեն էլավ, զմադեն կախեց, մեկ լե դառցավ էկավ տուն։

— Հեյ վա՛խ,— ասեց,—էդ ի՞նչ բալա էր ընկա ես, էլ չըմ կառնա աղատի։

Կնիկ տեսավ զիրկա նըյաթ, ասեց.— Մարդ, խեր էղնի, էմլա հ՚որի՞ ղնըյաթ կախեր իս։

Տղեն ասեց.— Կնիկ, ես չտրտմիմ, էլ ո՞ր տրտմի։ Թագավոր գրեր է վըր ընծիկ՝ ֆըլան թագավորի ախչիկն կուզե։ Ես լե քառսուն օր մոֆուլ իմ առի, թողեր իմ էկի իմ տուն։

Կնիկն ասեց.— Մարդ, քանի օր ծովային էր, ես բերի, իմ ձեռքեն կիգեր։ Էդի հողային է, չորու վրա է, իմ խվաթից դուրս է, էլ դու գինաս։ Կէրթաս՝ դու դինաս, կմնաս՝ դու դինաս։ Ինչ հունար ունես, դու լե բանցու։

Տղեն կտրեց զումուդ կնկա մոտեն, էլավ հեծավ զուր ձին, կապեց գթուր վրեն, առավ զդավաղան ուր ձեռք ու քշեց։

Շատ գնաց, քիչ գնաց, կնկա մը հ'ըռաստ էկավ։ Տեսավ օր նըստեր է, կով կկթե։ Էդ կովու վրեն կաշի չկա, միս մեքի է։

Օր տեսավ միս մեքի, հարցուց ասեց.— Մորքուր, մորքուր, էդ կովու վրեն հ'որի՞ կաշի չկա։

Կնիկն ասեց.— Դրռ վախտ չէ։ Գնա, սալամաթ օր դարցար էկար, քզիկ կասեմ։

Տղեն քշեց, շատ գնաց, քիչ գնաց, տեսավ օր կնիկըմ հաց կկողե ու կոտե, ու կդառնա կբռռա. «Ցամա՜ն, անոթից մեռա, անոթից մեռա»։

Տղեն օր զէդի տեսավ, էդորնե լե հարցուց.— Մորքուր, մորքուր, ղու էդա խըդար հաց կկողիս ու կդառնաս կուտիս, մեկ լե կբռռաս «ցա՜ման, անոթնից մեռա, անոթնից մեռա»։ Էդոր մանեն ի՞նչ է։

Կնիկն ասեց.— Դրռ վախտ չէ, գնա, հեղըմ դառցի՝ սաղ արի, սորա կասեմ։

Տղեն հոնկուց լե քշեց գնաց։ Գնաց տեսավ օր մարդըմ տրկլոզ, ուր օտներաց կախուկ է հ'առքեն։

Ասեց.— Ախբեր, զաստվածն օր կսիրես, ասե տեսնամ՝ զքզիկ հ'որի՞ն ին տկլոզցուցի ու կախի իդա փետեն։

Մարդ վերուց ասեց.—Կիշքես ղիս, ես հ'առջին հեղ էնդեն շատ զոռ մարդ մ'ենք, կբերենք զուրիշներ հըմլա չիպլըղցուցընենք, կախենք։ Հ'էսօր լե զիս ին բերած կախած։

Մեկ լե էդ մարդն ասեց տղին.— Չէ՞ զիմ հալ տեսար, մեղքըցի զքզիկ, ինչ օր կիգա քու ձեռքեն աղքըտի համար՝ թաղսիր չէնիս, օր իտաս, աստված լե քզիկ կիտա։

Տղեն քելեց։ Օր քելեց մարդ բռռաց ետևեն, ասեց.—Կանի, բանըմ լե ասեմ քզիկ։

Տղեն կանավ։

Մարդն ասեց.— Կէրթաս, հանդե իմ ախբեր ճամբու վրեն նստուկ է վըր ուր խազինեն ու կխառնե։ Ասե. «Ուր բաղդն իմ հ'ընկի, քու ախբեր կասեր՝ ուր խազինից տաս օսկի իմ դիմաց թըղ իտա ֆուխարեսնեբուն, բալքիմ քիչըմ զիմ շարշարանկներ թեթևցուն»։

Տղեն քշեց էկավ էդ խազինա խառնողի մոտ, ասեց՝ քու ախբեր հըմլա կասեր։

Խազինա խառնողն հերսոտավ վըր տղեն, ասեց.— Ջանըմի դու լե, ախբեր լե. ես իտամ տաս օսկի, իմ խազինեն պակսի՞։

Էկավ էդ մարդուն ասեց.— Դացի, ասի քու ախբոր, չտվեց։

Մարդն է, ասեց.— Օր չտվեց, թող, գնա քու գործու հետ։

Տղեն էն տեխեն դառցավ էկավ հաց կողողի մոտ։

Ասեց.— Մորքուր, դառցա էկա։ Դը ասե տենամ՝ ի՞նչ է սապապ, օր դու էդա խըդար հաց կէփիս ու կդառնաս ճվաս, կասես՝ «Յամա՞ն, ես անոթութենից մեռա»։

Մորքուրն կասե.— Գինաս սապապ ի՞նչ է։ Էնտիի դյունիեին ես օր հաց կկողենք, աղքատ կիգեր, կզարկենք, չընք իտե։ Էդա տեխ լե օր հաց կկողեմ, կէնեմ, օր վերցում՝ ուտեմ, կզարկեն ձեռքերուս վրեն, կբաշեն տանեն։ Խայել չէ աստված օր ես ուտիմ։

Օր զուր գլխու գալած նաղլ էրեց պառավ, դառցավ վըր տղեն, ասեց.—Չէ՞ զիս տեսար, կէրթաս ինչքան կըռնաս զաղքատն չզրկիս։

Թողեց, հոնկուց էկավ կով կթողի մոտ։ Ասեց.— Մորքուր, դու կասեր՝ դնա, դառցի էկո, կասեմ։ Սապապն ի՞նչ է օր քու կով անկաշի է։ Հանդե, ես դառցեր իմ էկի, դը ասա։

Պառավ վերուց ասեց.— Էնտիի դյունիեն միս կիտենք աղքըտին, կաշի չընք իտե։ Էդա դիի դյունիեն լե աստված ինատ է էրի, միս տվեր է ու զկաշին չտվեր է։

Թողեց էկավ, հ՝եբ զէդոնց գլխու դալածներ հասկցավ։ Ընկավ ուր ճամբու հետ, դնաց։

Շատ գնաց, քիչ գնաց, հ՝ըռաստ էկավ չաղցրպնի մը։ Տեսավ օր ալըրտուն լիք ալուր է ու էդի վեսա կէրթա ալըրտան հ՝առչև, կվերցու թողըմ ալուր կթալե ուր բերան ու կասե.—Յամա՞ն, անոթնից մեռա, անոթնից մեռա։

Կասե էդ մարդուն.— Ախբեր, կէղնիս ընծիկ հ՝ընկեր։

Մարդն կասե.— Հա, հ՝որի՞ չըմ էղնի։

Էղան ընկեր։ Էլան հ՝ընկան ճամբախ, էկան. էկան, շատ էկան, քիչ էկան, տեսան օր մարդըմ դետու մը հ՝առեջ պառկուկ է վըր փորին ու զբերան տվեր է ջրի դեմ, կխմե, չխմե կասե՝ «Ես ծառվու մեռա, ծառվու մեռա»։

Տղեն էդոր լե կասե.— Ախբեր, չըս էղնի մըզիկ հ՝ընկեր։

Մարդն կասե.— Հ՝որի՞ չըմ էղնի։

Էղան իրեկ հ՝ընկեր ու հ՝ընկան ճամբախ, էկան։ Էկան տեխըմ, տեսան օր էրկու մարդ նստուկ են՝ մեկ զուռնա կփչե, մեկը՝ դոլ։

Էկան մոտեցան, բարև տվին, բարև առան։ Վերցին էդ զուռնաճին ու դոլճին հարցուցին, ասին.— Ախբըրտանք, դո՞ր կէրթաք։

Վերուց տղեն ասեց.— Կէրթանք զթագավորի ախչիկ բերենք;

— Զմըզիկ լե չըք տա՞նի ձըր հետ,— ասին ըդ զուռնաճին ու դոլճին։

Տղեն ասեց.— Դուք հ՝իգաք, հ՝որի՞ չընք տանի։

Ասին.— Կիգանք։

Էլան առան զիրար, էղան հինգ հոգի ու էկան։

Էկան մարդու մը հ՝ըռաստ։ Տեսան օր էդ մարդ էրկու ահագին քար

ծակեր է, էձգի ուր օտներն ու կվաղե աղվեսու ետևեն, աղվեսս կբռնե։

Տղեն վերուց էդոր լե ասեց.— Ախբեր, չը՞ս էղնի մըղիկ հ՚ընկեր։

Մարդն ասեց.— Կէղնեմ։

Էղան հինդ-վեց ջան ու էլան հ՚ընկան դեմ քշեցին էդ թագավորի քաղաք օր զախչիկ պիտի տանեն։

Գացին թագավորի քեռշկի դուռ նստան։ Թագավորն է, օր զէդոնք տեսավ նստուկ ուր քեռշկի դուռ, ճամբըցուց՝ զէդ տղեն առավ, գնաց։

Առավ գնաց։ Հարցուց.— Տղա՛, դուք հ՚ուստե՞ն եք, հ՚որի՞ն եք էկի հ՚ոգի նստի։

Տղենն ասեց.— Մենք էկեր ենք քու ախչկան հ՚ուզընկան։

Թագավորն ասեց.— Էկեր՝ իք իմ ախչկան, բան չըմ ասի։ Մինակ ես շարդ ունիմ, թե օր կատարիք՝ կիտամ, առնիք էրթաք։ Յոթ պղինձ հալվա պիտի շինեմ, օր կերաք՝ կիտամ զիմ ախչիկ, առնեք էրթաք, օր չկերաք՝ չըմ իտա։

Զէդ օր լըսեց, տղեն սևավորավ, մթնավ ու էլավ էկավ ուր ընկերներու մոտ։ Հ՚ընկերտանք տեսան, օր տղեն մթներ է, ձեն չէլնի ուր մոտեն, հարցուցին ասին.— Ախբեր, զքու նըյաթ հ՚որի՞ն ես էրի ու նստի։ Չէղնի թագավոր պակաս խոսք ասեց քզիկ։

Տղեն ասեց.— Չէ, պակաս խոսք չասեց։ Մենակ ասեց, օր զիմ ախչիկ իտամ, բանըմ կդնիմ ձըր հ՚առեջ, օր էնիկ՝ կիտամ, առնեք էրթաք։ Յոթ պղինձ հալվա կշինիմ, պետք է ուտեք։ Օր չկերաք, զգլուխ ձի կզարկիմ։

Ջաղցպան զէդ օր լսեց, ասեց.— Թե օր էդ է, մարախ իսկի մ՚էնի, հասավ հ՚իս։

Թագավոր թամբիհ էրեց, օր յոթ պղինձ հալվա էփեն, տանեն, իտան էդ մարգերուն, ուտեն։ Էփին, առան օր էկան, շաղցպան քշտեց զթևերն ու հ՚ընկավ վրեն։ Զվեցն կերավ, մեկն էլ խըլըսցնելու վրա էր, հասան մեկել հ՚ընկերտանք վրեն, ասին.— Տնավեր, զմզիկ լե հետ կուտիս, քիչըմ լե թող մզիկ։ Առան ձեռքեն, կերան։

Օր կերան խըլըսան, էկան թագավորին ասին՝ կերան։

Թագավոր օր լսեց զյոթ պղինձ հալվեն տղեն ու ուր հ՚ընկերտանք կերած ին, ասեց՝ վալլահի, զախչիկ տարան։

Ըստ հաղ ասեց ուր հ՚առջևու մարդուն.— Կէրթաս ուրանց կասիս՝ բանըմ լե կա, կասիմ, օր էրին, թըղ առնեն զիմ ախչիկ, էրթան։ Կէրթաս ուրանց կասիս՝ իմ դռան հ՚առջև հ՚աղբուրըմ կա, օր էդ աղբրի ջուր լե ցամքըցուցին, թըղ առնեն զիմ ախչիկ, էրթան։

Էկան ասին։

14—915

Գետ ցամքեցնող ախբերն ասեց.— Էդ լե հասավ հ՝իս, դուք իսկի յախա չանեք։

Կէլնին կիգան վըր հ՝աղբրրին։

Գետ ցամքցնող կասե.—Հ՝ու՞ր է էդ հ՝աղբուր, ցուցուցեք տեսնամ։

Կցուցուն։ Զբերան կիտա դեմ ու կծրոբցու։ Մեկ լա կիշքեն օր հ՝աղբուր ցըփուն կտրավ։

Թագավորի հ՝առջևու մարդ կասե.—Զջուր լե ցամքցուցին, էլ ի՞նչ կասես։

— Էլ ի՞նչ կասեմ, մնաց մեկ բան էնեն ու առնեն զախչիկ, էրթան։ Կէրթաս ուրանց կասիս. վաղ յոթ աղվես կթողեմ, օր հասան իմ աղվեսներու ետևեն, բռնեցին, զաթի կառնեն զուրանց հարսն ու կէրթան։ Օր չհասան բռնեցին, զգլուխ ուրանց կկտրիմ։

Լալեն կիգա կասե։

Աղվես բռնող ախբերն կասե.— Էդ լե վըր ընծիկ։

Ու կէլնի կէձգե զուր քարեր օտներն ու կիգա կանի թագավորի դուռ։

Թագավոր կտեսնա, օր աղվես բռնողն էկեր է, կանի ուր սարի դուռ։ Զյոթն աղվես կթողե ու մարդ կընկնի ետևեն, ուր քարեր լե օտք։ Դեհ հ՝ոդա, դեհ հ՝ոնա, հար ի հ՝իրկոն զարկեց, զարկվավ, զյոթ աղվես լե բռնեց առավ, էկավ թագավորին։ Օր առան էկան թագավորին, թագավորի սրսունք դողաց, ասեց.

— Լալա, զախչիկ տարան։ Մեկ ճար մանցեր է, օր զէն լե էրին, ալավոկի կառնեն զախչիկն ու կէրթան։ Գնա ուրանց ասե՝ լուսուն կժողվիմ զիմ ասքյարն, կէլնիմ կռիվ։ Թե օր ուրանք հաղթեցին իմ ասքրին, զաթի կառնեն զախչիկ, կէրթան։ Թե չէ՝ ուրանց գլուխ կզարկեմ։

Լալեն էկավ ասեց.— Թագավոր հրմլա կասե։

Էդ տղեն վերուց ասեց.— Ախբրրտանք, էդ լե իմ վրեն, դուք ծանղր նստեք ձրր տեխ, դուք զձրր էրածն էրիք, մանցի ես։

Թագավորն է, էլավ լուսուն, ինչքան մարդ ու ասքյար կեր ուր հողու մեջ, քոմեց, առավ էկավ։ Օր քոմեց, առավ էկավ, ճամբրցուց զուր առջևու լալեն մրտ էդ տղեն, ասեց.

— Թրղ զուրանց թադարուկ տեսնան վաղ չէ, մրկլոր էլնենք կռիվ։

Տղեն ասեց.— Մենք զմրր թադարուկ տեսեր ինք։

Օրն օր էկավ, թագավոր առավ զասքյարն, էլավ դաշտ։ Տղեն ասեց՝ «Թուր, զքզիկ տեսնամ»։ Թուր հ՝ընկավ թագավորի ասքրրի մեջ, յոթն օր զարկեց ու զարկվավ, զթագավորի ասքրրի խրս բերեց։

Թագավորն օր տեսավ ուր ասքրրի խրսն էկավ, ճամբեց ղլալեն տղի մոտ, ասեց՝ հերկ է, ուրանք ալթ էրին, թրղ հ՝իգան առնեն զախչիկն ու էրթան, էլ բանրմ չրմ կրռնա ասի։

Օր թագավոր զախչիկ տվեց խըլըսավ, խոսկ առան, փըրթան-աղատան։

Տղենն ասեց.— Ախրը էնի էրեր է, ես չըմ էնի, կանի աղեկութեն մը էնիմ, սորա առնեմ զախչիկն էրթամ։

Առավ ղիրիցու տված գավազան, հ'ընկավ մըջ շանդրկներուն ու զարկեց, ասեց՝ հերկ է քնեք։ Հ'ըմեն էլան սաղցան։

Էդոր վրեն թագավոր էղավ աշխըրկով, բերեց զքարվան բառցավ, օրտու մը ասքյար դրեց ախչկա հետ ու հուր ու հաշամով, ինչքան մախ-լուղ կեր էդ քաղքի մեջ, էլան էկան ճամբու դրին, զտղեն, զախչիկն ու դուր ընկերները դառցան գացին, էկան ուրանց տուն։

Տղեն է, առավ զախչիկն ու զուր հ'ընկերները, քշեց էկավ։

Օր քշեց էկավ, ախչիկ ճամբու հետ ասեց.— Տղա, դու զէն մ'ասի. դու զիս քզի՞կ է կտանիս, չէ՝ ուրիշի։

Տղեն ասեց.— Զքզիկ կտանեմ մըր թագավորին։

Ախչիկն ասեց.— Օր գինամ զիս կտանիս ձըր թագավորին, կխեղդ-վիմ, չըմ հ'իգա։

Ախչիկն օր էդ հըմալ ասեց, տղեն փոշեմնավ վըր ուր ասածեն։ Ասեց.— Տնաշեն, ես էդա խըդար զարկեմ, զարկվիմ, հեչ քու խելք կկտրե՞ ես տանեմ զքզիկ, իտամ ուրիշին. ընծիկ կտանիմ։

Առավ էկավ, ուր տուն հ'իջավ։

Էդ էրկրի թագավոր լե տողսանլըղ էր, օր զուր աչք թալեր էր էդ տղի կնիկ, տեսավ օր չկըռցավ տղի գլուխն կորցուցներ, հար ի տղեն դառ-ցավ էկավ, դամլա հ'իջուցեր էր, մեռի։

Հ'եր էկավ, լսեց թագավոր մեռեր էր, բերեց զախչիկ պսակեց վըր ուրեն, յոթն օր հարսնեք էրեց, դհոլ ու զուռնեն զարկեց, խաղցան ու նստան թագավորի տեխ՝ վըր թախտին թագավորի։ Օր նըստավ վըր թախտին, բերեց ուր հ'ընկերներուն տվեց մեկմեկ բեռ օսկի ու մեկ մեկ ձի ու ինք սկսեց ուտել խմել, ուր քեֆին իշկել։

Երկնուց պատավ իրեկ խնձոր, մեկ՝ ատողին, մեկ՝ գրողին, մեկ լե՝ անկաճ էնողին։